«ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ 04.12.2012Թ.
«ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՑ ԱՌԱՋ ԸՆԿԱՎ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոդվածի հեղինակը գրում է. «ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ԱԺ նիստի ժամանակ հայտարարեց, որ նախագահական ընտրությունները տեղի են ունենալու փետրվարի 18-ին: Սակայն ԿԸՀ-ն դեռ չի հայտարարել ընտրությունների օրվա մասին: ԿԸՀ-ից երեկ «Ժամանակը» պարզաբանում խնդրեց՝ ԱԺ նախագահի այս հայտարարության հետ կապված: ԿԸՀ լրատվական ծառայությունից մեզ հայտնեցին, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ընտրությունների հետ կապված հայտարարություն է անելու ՀՀ նախագահը Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, բայց դեռ չի արել, մնում է միայն պարզել, թե Հովիկ Աբրահամյանը ինչու՞ է շտապել և նման հայտարարություն արել, իր որոշու՞մն է, թե՞ ՀՀԿ-ի»:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղար Հերմինե Հարությունյանը, թերթի թղթակցի հարցադրմանն ի պատասխան, տեղեկացրել է, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ Հանրապետության Նախագահի ընտրության օրվա մասին հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղար
Հերմինե Հարությունյան